



## Դեսպան Յամադայի Ամանորյա շնորհավորանքը

Շնորհավորում եմ բոլորի Ամանորը: Ուրախ եմ, որ ավելի քան կես տարի արդեն լրացել է իմ Հայաստանում Ճապոնիայի դեսպանի պաշտոնը ստանձնելուն պես:

Նախորդ տարի Ճապոնիայի և Հայաստանի հարաբերությունները բացառիկ հարուստ և բեղմնավոր էին: Հունվարին Ճապոնիայի

դեսպանությունը, որն ավելի քան 4 տարի գործում է Երեւանում, վերջապես մշտական հանգրվան գտավ նոր շենքում: Փետրվարին ստորագրվեց Ճապոնիա-Հայաստան ներդրումային համաձայնագիրը՝ Կովկասյան տարածաշրջանի երկրների շարքում առաջինը: Ճապոնիայի Ազգային Դիետը արդեն վավերացրել է այն, եւ այժմ մենք անհամբեր սպասում ենք Հայաստանի Ազգային ժողովի կողմից վավերացմանը: Սեպտեմբերին առաջին անգամ Ճապոնիայի արտգործնախարարը այցելեց Հայաստան անկախացումից եւ մեր դիվանագիտական հարաբերությունների հաստատումից քառորդ դար ի վեր:

Հայաստանի համար նույնպես 2018 թվականը իրոք արտասովոր էր նույնիսկ իր շատ երկար ու հին պատմության համատեքստում: Ամենից ավել, զարնանը տեղի ունեցած խաղաղ անցումը գրավեց ամբողջ ուշադրությունը եւ արժանացավ գովասանքի աշխարհի բոլոր անկյուններից՝ տալով հույս, ավելի ու ավելի բարդացող միջազգային ասպարեզում: Խորհրդանշական էր և տեղին, որ այս տարի 2800-ամյակը նշող Երեւանը դրա համար անհրաժեշտ հարթակ հանդիսացավ՝ հաստատելով հայ ժողովրդի առանձնահատուկ բնույթը, որը միեւնույն ժամանակ «հնագույն» եւ «ծայրահեղ ժամանակակից» է:

Ճապոնիան նույնպես մեծ փոփոխությունների է առճակատվում 2019 թվականին: Ապրիլի վերջ Կայսրը կիրաժարվի գահից և «Հեյսեյ» դարաշրջանը կփակի իր 30-ամյա պատմությունը: Թագաժառանգի գահակալությունը ողջ երկիրը կբերի նոր դարաշրջան՝ նոր անունով: Իսկապես մեծ հնարավորություն է Ճապոնիան տրված անցկացնել 2020 թվականին Տոկիոյում Օլիմպիական եւ Պարալիմպիկ խաղերը եւ 2025 թվականին Օսակայում համաշխարհային ցուցահանդեսը: Ճապոնիան այս եւ այլ նոր ուղիների միջոցով կշարունակի նպաստել ողջ մարդկության խաղաղությանն ու զարգացմանը:

Հայաստանն ու Ճապոնիան ամբողջ աշխարհում յուրահատուկ «երկվորյակներ» են: Որպես այդպիսին, հույս կա, որ երկու կողմերից շատ քաղաքներ այսուհետ կնքելու են քույր-քաղաքների հարաբերություններ, բայց իրականում մենք կարող ենք համարել ինքներս մեզ որպես «քույր-երկրներ» կամ «քույր ազգեր»: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ երկու երկրները կխորացնեն մեր բարեկամությունն ու սերտ համագործակցությունը՝ դրանով իսկ համադրելով որոշակի համամարդկային արժեքներ եւ ուղղություններ, ինչը կարող է շատ ավելի ընդգրկուն համընդհանուր համատեքստ ստանալ դուրս գալով երկկողմանի հարաբերությունների հարթությունից:

Ցանկանում եմ, որ 2019 թվականը բոլորի համար իսկապես հիշարժան և ձեռքբերումների տարի լինի: Ես անկեղծորեն ակնկալում եմ ձեզանից շարունակական ուղորդում եւ բարյացակամ խորհուրդներ:

Հունվար 2019

ՀՀ -ում Ճապոնիայի Արտակարգ և Լիազոր Դեսպան

Ջուն Յամադա